

ցաւ դարձեալ ըստ իւրն զթութեան եւ ողորմութեան. զի հաճեցոյց զգթասիրտ արքայն եւ զփոխանորդ նորին, որք ետուն հրամաննորոգել վերըստին զնոյն եկեղեցին, որք եւ ահա այժմ կամք Աստուծով ի վերայ գործոց նորին շինութեանն՝ սպասելով կատարմանն:¹

Որ եւ ի սոյն վերոյիշեցեալ թվին, որ է ՌՃԿԸ (= 1719), տնօրինմամբ Հոգւոյն Աստուծոյ, մէք նըւաստ ծառայք Տեառն, վերոյգրեցեալ Գրիգոր եւ Յօհաննէս, սպասաւորք բանի, կարի եւ յոյժ տենչանօք, հրամանաւ մեծի եւ տիեզերահռչակ ծայրագոյն Քահանայապետին մերում, գահակալի Սրբոյ ընդհանրածաւալ, Առաքելական, Աստուածաէջ եւ լուսահեղոյս գահին Սրբոյ Էջմիածնի Տեառն Աստուածատրոյ, Սրբազան պատրիարգին եւ Կաթողիկոսին Հօրն հասարակաց,² ետուք տպել եւ ի լոյս ածել զգրքուկս զայս, որ կոչի Չէնֆ դամբարան: Չի գոնէ մօր մերոյ, զմեզ ծնողի լոմայիկ իմն ընծայեսցուք,³ եւ անբաւ

1 «Սաեւ յայսմ միջոցին (1719, Յունիս) Մեծ Հրկիթութիւն եղեւ ի կոստանդնուպոլիս եւ այրեցաւ բազմահաւաք Եկեղեցին յանուն Սրբուհւոյ Կուսին Մարիամու. զոր (sic) գրեթէ իսպառ յուսակաուր եղեալ Լքան երկոքին պետքն Սրբազանք. քանզի այն է աւագ Եկեղեցի եւ պատրիարքարան կոստանդնուպոլսոյ:

...Որ եւ ինքեանք իսկ Պետքն սրբազանք որպէս գլխտին մշակս ի մէջ փայտի եւ քարի աշխատէին մինչեւ ցըլումն երկնահասնգէտ տաճարին այն. եւ ի լրանալն արարին զսօն նաւակատեաց տեառնագրական: Եւ ոչ է պարտ զանց առնել զքրտնաջան աշխատասիրութիւնս վերոգրեցեալ պերճաշուք իշխանացն մերոց. այսինքն մահտեսի Սեղբեսարոսին եւ մահտեսի Մելիտոնին, մահտեսի Յարութիւնին եւ մահտեսի Սարգիս Խաչատրեան, զորս կրեցին յօժարաբար ի շինումն այս սուրբ Եկեղեցւոյս եւ յամենայն իրս, Աստուծով օգնէին սրբական Պետացն մերոց» (Հաննէէջ 128—129):

2 Աստուածատուր Ա. Համատանցի 1715—1725:

3 Իրենց հոգւով սիրած Ս. Կարապետին վերաբերող գործ մը առաջին անգամ հրատարակելով ոչ միայն բարոյա-